


## Սանդղակներ ու կոորդինատային ճառագայթ

**Միբեյի սովորողներ** սանդղակի ամենապարզ տեսակը **ուղղի հատված** է, որը գծիկներով բաժանված է հավասար մասերի: Սանդղակի հարևան գծիկների միջև եղած հատվածը կոչվում է **բաժանում**: Մեկ բաժանումը համապատասխանում է չափման **ընտրված միավորին**:


Դիտարկենք մի ճառագայթ, որը սկիզբ է առնում 0 կետից, և մի հատված, որը կկոչենք **միավոր հատված**: Ճառագայթի վրա, 0 կետից սկսած, հաջորդաբար նշենք կետեր այնպես, որ ցանկացած 2 հարևան կետերի հեռավորությունը հավասար լինի միավոր հատվածի երկարությանը:

### Կոորդինատային ճառագայթ`



**Կետի մոտ գրված թվերին անվանում են կետի կոորդինատներ:**


**Օրինակ`** C կետի կոորդինատը հավասար է 5-ի:



## Միբեյի սովորողներ, այսօրվա ձեր աշխատանքը սա է:

### Առաջադրանքներ

1. Ո՞ր թվերին են համապատասխանում A,B,C,D,E,F կետերը կոորդինատային ճառագայթի վրա.



**A(1), B(5), C (8), D (10), E(11), F (14)**

2. Ի՞նչ կոորդինատներ ունեն A և B կետերը : Ի՞նչ կոորդինատներ ունեն A և B կետերի միջև նշված կետերը:



**A(5), B (10), C (7), D (9)**

3. A(150) , B(360) և C(30) կետերից ո՞րն է կոորդինատային ճառագայթի վրա ավելի աջ գտնվում, իսկ ո՞րն է ավելի ձախ գտնվում:

**Ավելի ձախ-C(30)**

**Ավելի աջ-B (360)**

4. Կոորդինատային ճառագայթի վրա B կետը գտնվում է A(15) կետից ձախ: Ի՞նչ ամենամեծ կոորդինատ կարող է ունենալ B կետը, իսկ ի՞նչ ամենափոքր կոորդինատ կարող է ունենալ B կետը:


**B (14), B (0)**

5. Գծե՛ք O կետից սկիզբ առնող կոորդինատային ճառագայթ: 10մմ երկարություն ունեցող հատվածը վերցրե՛ք որպես միավոր հատված և ճառագայթի վրա նշե՛ք հետևյալ թվերին համապատասխանող կետերը.


ա) 0, 1, 2, 3, 4, 5, 6

բ) 0, 3, 6, 9

գ) 0, 2, 4, 6, 8



6. Գտե՛ք այն 4 թվերը, որոնք գրված պետք է լինեն չափիչ սարքի սանդղակի վրա:



220, 240, 260, 400


7. Բերե՛ք չափիչ սարքերի մի քանի օրինակ և ասե՛ք, թե չափման ինչ միավորի են համապատասխանում այդ սարքերի սանդղակների բաժանումները:

**Մետր, չափերիզ, քանոն-համապատասխանում են սմ, դմ, մմ, մ,**


**Կշեռք-համապատասխանում է գր, կգ, ցենտ, տոննա**

**Ժամացույց-համապատասխանում է ր, ժ, վրկ**


8. Գծե՛ք  $OA$  և  $OB$  տարբեր ճառագայթների այնպես, որ  
 ա) դրանք լինեն միևնույն ուղղի ճառագայթներ,



- բ) դրանք միևնույն ուղղի ճառագայթներ չլինեն:



9. Տրված են 4 կետեր, որոնցից ոչ մի 3-ը չեն գտնվում մի ուղղի վրա: Յուրաքանչյուր 2 կետով ուղիղ են տարել: Քանի՞ ուղիղ է տարված:



10. Գծե՛ք 5սմ երկարությամբ մի AD հատված: Նրա վրա նշե՛ք այնպիսի B և C կետեր, որ ստացված AB և CD հատվածների համար ունենանք՝

$|AB| = 2\text{սմ}$  և  $|CD| = 3\text{սմ}$ :

